Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «Երևանի հ4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի հետևյալ թափուր աշխատատեղերի համար՝

1. « Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետ (1 դրույքաչափ)

2. «Հայոց պատմություն» առարկայի դասախոս (շաբ.՝ 13 ժամ)

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1. Դիմում,
2. Կրթության մասին հավաստող փաստաթուղթ(դիպլոմ՝ բնօրինակը և պատճենը),
3. Անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4. Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք(առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն,
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ(բնօրինակը և պատճենը):
9. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան,կոչումը հավաստող փաստաթղթեր(դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2025թ. նոյեմբերի 05-ից 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից 15.00-ն՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից «Երևանի հ4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ -ում, հասցեն՝ ք. Երևան, Նոր Նորքի 4-րդ զանգված, Գյուլիքևխյան 20:

Մրցույթը կկայանա 2025թ. նոյեմբերի 21-ին ժամը 14.00-ին «Երևանի հ4 արհեստագործական պետական ուսումնարան»ՊՈԱԿ -ում, հասցեն՝ ք. Երևան, Նոր Նորքի 4-րդ զանգված, Գյուլիքևխյան 20:

Տեղեկությունների համար զանգահարել (010)634070 հեռախոսահամարով: